ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Եղեգնաձոր **31/10/2019**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7 անդամներ:

Բացակա էին՝ Արտակ Ալոյանը, Արտաշ Այվազյանը, Նարինե Գրիգորյանը, Վալոդյա Սմբատյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Անժելա Սարգսյանը

Լսեցին
31.10.2019Թ.-Ի ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

1. Հաստատել 31.10.2019 թ.-ի թիվ 10 արտահերթ նիստի օրակարգը՝

1) <<ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՎՈՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ՆՈՐՈԳՄԱՆ >> ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 23.04.2019Թ-Ի ԹԻՎ 38 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 85-Ա/

Լսեցին

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՎՈՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 23.04.2019Թ-Ի ԹԻՎ 38 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի ,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով և նկատի ունենալով, որ համայնքային ֆինանսական ներդրումներ կատարելու պայմանով 2019թ.-ին ՀՀ պետական բյուջեից համայնքներին տրամադրվելու են նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ.

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել ներկայացնելու <<Եղեգնաձոր համայնքի Լևոնյան փողոցի լուսավորության ցանցի նորոգման աշխատանքներ>> տնտեսական զարգացման ծրագիրը:

2. Սուբվենցիայի ստացման համար գործող կարգով կազմել և ՀՀ Վայոց ձորի մարզպետարան ներկայացնել <<Եղեգնաձոր համայնքի Լևոնյան փողոցի լուսավորության ցանցի նորոգման աշխատանքներ>> տնտեսական զարգացման ծրագրի ֆինանսավորման հայտը:

3.Սահմանել, որ ծրագրի ներկայացման համար համայնքի 2019թ.-ի բյուջեով բավարար ֆինանսական միջոցներ են նախատեսված ծրագիրն իրականցնելու և համայնքային ներդրում կատարելու համար:

4.Ուժը կորցրած ճանաչել Եղեգնաձոր համայնքի ավագանու 23.04.2019թ.-ի <<ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՎՈՆՅԱՆ ԵՎ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ՝ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ >> թիվ 38 որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 86-Ա/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,,Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և ,,Բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով.

Տալ համաձայնություն համայնքային բյուջեի պահուստային ֆոնդի վարչական մասի բաժին 11 խումբ 1 դաս 2 պահուստային ֆոնդեր ոլորտի համայնքների պահուստային միջոցներ հոդվածից /հոդված 4891/ 114100 ՀՀ դրամ պակասեցնել՝ ավելացնելով.

- 59100 ՀՀ դրամ բաժին 9 խումբ 5 դաս 1 ոլորտի սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին հոդվածին /հոդված 4511/ ,, Եղեգնաձորի մանկապատանեկան մարզադպրոց ,,ՀՈԱԿ -ի մարզադաշտի ծապսերի ֆինանսավորման համար
- 55000 ՀՀ դրամ բաժին 1 խումբ 6 դաս 1 ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ ոլորտի պարտադիր վճարներ հոդվածին /հոդված 4823/ կադաստրային վճարների իրականացման համար :

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 87-Ն/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և ,,Բյուջետային համակարգի մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով .

Տալ համաձայնություն համայնքային բյուջեում կատարել պլանային փոփոխություն հողի իրացումից առաջացած 1660300 ՀՀ դրամ գումարը ներառել համայնքային բյուջե որպես հողի իրացունից մուտքեր (տող 8411) և նպատակաուղղել

- 148000 ՀՀ դրամ բաժին 9 խումբ 5 դաս 1 արտադպրոցական կրթության ոլորտի այլ կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ հոդվածին /հոդված 4655/ ,,Եղեգնաձորի ՄՍԿ,,ՀՈԱկ-ի կարիքների համար ընդհանուր օգտագործման կիսափափուկ աթոռներ ձեռք բերելու համար :
- 95000 ՀՀ դրամ բաժին 1 խումբ 1 դաս 1 օրենսդիր և գործադիր մարմիններ ,պետական կառավարում ոլորտի այլ մեքենաներ և սարքավորումներ հոդվածին /հոդված 5129/ էլեկտրական ջեռուցիչներ ձեռք բերելու համար :

- 65000 ՀՀ դրամ բաժին 1 խումբ 6 դաս 1 ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ ոլորտի շենքերի և շինությունների նորոգում հոդվածին /հոդված 5113/ Միկոյան 13 բնակելի շենքի բակի ցայտաղբյուրի հիմնանորոգման աշխատանքների ֆինանսավորման համար :
- 1077300 ՀՀ դրամ ավելացնել բաժին 9 խումբ 1 դաս 1 նախադպրոցական կրթության ոլորտի այլ կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին հոդվածին /հոդված 4655/ ,,Եղեգնաձորի թիվ 1 մանկապարտեզ ,, ՀՈԱԿ -ի շենքի համար թվով 11 հատ (39.7 քմ) եվրոպատուհաններ և 2 հատ (4.32 քմ)եվրոդռների ձեռքբերման և տեղադրման աշխատանքների ֆինանսավորման համար :
- 275000 ՀՀ դրամ բաժին 5 խումբ 1 դաս 1 աղբահանություն ոլորտի այլ կապիտալ դրամաշնորհներ հոդվածին /հոդված 4657/ աղբամանների ձեռքբերման ֆինանսավորման համար :

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 88-Ն/

Ավագանու անդամներ

ՌՈԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԳԱՌՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՈՍԿԱՆՅԱՆ

ՍՄԲԱՏ ՍՄԲԱՏՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Անժելա Սարգսյանը